ԴԱՏԱՎՈՐ ԳԵՎՈՐԳ ԳՅՈՉԱԼՅԱՆԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ
(ԹԻՎ ՀԿԴ/0161/02/23 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի 16.01.2026 թվականի որոշման վերաբերյալ)

Քաղաք Երևան **16.01.2026թ.**

1. Ընդհանուր առմամբ համաձայն լինելով մեծամասնության հետ այն հարցում, որ ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման (Որոշման եզրափակիչ մաս)՝ ցանկանում եմ իմ այլընտրանքային մոտեցումը ներկայացնել առհասարակ **<u>վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի կապակցությամբ</u>**[1] (Որոշման պատճառաբանական մաս):

2. Իհարկե, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի շուրջ կոլեգիալ կարգով քննվող դատարանում կարող են լինել տարբեր մոտեցումներ: Իմ իրավական համոզմամբ, այս գործով ներկայացված բողոքը կարող էր լրացուցիչ քննարկման ենթարկվեր՝ պարզելու, թե արդյո՞ք համապատասխանում էր օրենսդրական այն նվազագույն պահանջներին, որոնք նախապայման են բողոքը վարույթ ընդունելու համար:

3. Վճռաբեկ դատարանը, հավատարիմ մնալով իր կոլեգիալության սկզբունքին, գնահատել է իրավիճակն այլ կերպ՝ վարույթ ընդունելով վճռաբեկ բողոքը: Իմ տարբերվող կարծիքը կայանում է նրանում, որ Վճռաբեկ դատարանն այս հարցում շատ մեծ հայեցողություն չունի, քանի որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու չափանիշները հստակ սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[2] (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 394-րդ հոդվածով, հետևաբար Վճռաբեկ դատարանի խնդիրն է, հիմնվելով այդ չափանիշների վրա, առավել պարզեցնելու վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանները՝ դրանով իսկ ապահովելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանների կանխատեսելիությունը:

4. Իմ գնահատմամբ նշված հարցն ունի էական նշանակություն իրավակիրառ պրակտիկայի համար, քանի որ այս խնդրին Վճռաբեկ դատարանը, ըստ էության, բախվում է 2005 թվականից սկսած, երբ փոփոխության ենթարկվեց 1995 թվականի Սահմանադրությունը[3] և Վճռաբեկ դատարանին վերապահվեց օրենքի միատեսակ կիրառության սահմանադրական լիազորություն: Մասնավորապես, ի տարբերություն 1995 թվականի Սահմանադրության 92-րդ հոդվածի, 2005 թվականի Սահմանադրության 92-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը սահմանում էր. «*Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով*»: Այս սահմանադրական նորմը կրկին փոփոխության ենթարկվեց 2015 թվականին[4] (գործող Սահմանադրություն, այսուհետ՝ Սահմանադրություն), որի 171-րդ հոդվածը սահմանում է.

«***1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:***

2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները»:

---

[1] Այստեղ և այլուր ընդգծումներն ըստ հեղինակի:
[2] Ընդունված՝ 09.02.2018 թվականին և ուժի մեջ մտած՝ 09.04.2018 թվականին, ՀՕ-110-Ն օրենք:
[3] Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2005 (հատ. թող.), 05.12.05, հոդ. 1426:
[4] Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ հատուկ թողարկում 21.12.15, հոդ. 1118:

5. Սահմանադրական վկայակոչված նորմն իր մարմնավորումն է ստացել նաև դատավարական օրենսգրքերում: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝

1. Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը:

2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

3. Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով:

4. Մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու նպատակով Վճռաբեկ դատարանը վերանայում է այն դատական ակտերը, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը:

Օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-3-րդ մասերն իրենց հերթին սահմանում են՝ *վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝*

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝

1) առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ.

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

3) դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

3. Սույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե՝

1) բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը.

2) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

6. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու չափանիշների հետ կապված բազմաթիվ անգամ արտահայտվել է Սահմանադրական դատարանը և, արձանագրելով հանդերձ առկա խնդիրը, նշել է. «***(...)*** ***<u>վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն</u>*** *(տե՛ս 09.04.2007 թվականի թիվ ՍԴՈ-690 որոշումը, էջ 15)*»: Մեկ այլ որոշմամբ, Սահմանադրական դատարանը նշել է. *«(...) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումները լրացնում են Վճռաբեկ դատարանի կողմից զարգացվող իրավունքի շրջանակը:* ***<u>Հետևաբար՝ արդարադատություն հայցող անձն իրավունք ունի ակնկալելու Վճռաբեկ դատարանի օրենսդրական կանոնների մեկնաբանման արդյունքում առաջադրած բողոքի ընդունելիության կանխատեսելի գործնական չափանիշներ ու պահանջներ: Սույն հանգամանքը կարևոր է ինչպես վճռաբեկ բողոք ներկայացնող անձի,</u>***

<u>այնպես էլ այն անձանց համար, որոնք Վճռաբեկ դատարան կդիմեն հետագայում</u>*: Հետևաբար՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանությունները հնարավոր բողոք բերող անձանց կողմից նույն հարցի առնչությամբ դատավարական կանխատեսելի վարքագիծ դրսևորելու հնարավորություն են ընձեռում:* ***<u>Ընդսմին, բողոքի ընդունելիության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումները, լինելով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման գործառույթի իրացման բաղկացուցիչ մաս, պետք է ապահովեն վճռաբեկ բողոքի ընդունելիության օրենսդրական չափանիշներից յուրաքանչյուրի մեկնաբանման և կիրառման կայունությունն ու հետևողականությունը</u>****: (…) Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակից է բխում Վճռաբեկ դատարանի դատական ակտերի պատճառաբանվածության առանձնահատուկ անհրաժեշտությունը, քանզի Վճռաբեկ դատարանը ոչ միայն իրականացնում է կոնկրետ գործով իրավունքների դատական պաշտպանություն, այլև իր կայացրած դատական ակտով ապահովում է միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը՝ պահպանելով իրավական նորմերին տրվող մեկնաբանության որոշակիությունը, կայունությունը և հետևողականությունը: Ընդ որում, սույն պահանջները հավասարապես կիրառելի են Վճռաբեկ դատարանի բոլոր դատական ակտերի նկատմամբ: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի որոշումներում բողոքաբերների փաստարկների ստուգման և կատարվող հետևությունների և եզրահանգումների շղթան պետք է լինի որոշակի, այն է՝ տեսանելի լինի դատողությունների և եզրահանգումների միջև տրամաբանական կապը: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ ի տարբերություն վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու հիմքերի, որոնք դատավարական օրենսգրքերում սահմանված են սպառիչ բովանդակությամբ,* ***<u>վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի նկարագրությունն ընդհանրական է, ինչն առաջացնում է որոշակի և ողջամտորեն մանրամասն դատական մեկնաբանության անհրաժեշտություն</u>****: Այլ կերպ՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու և առանց քննության թողնելու հիմքերն օրենսդրորեն սահմանված են, որպես կանոն, տարամեկնաբանության առիթ չստեղծող հստակությամբ, ինչը նվազեցնում է համապատասխան իրավանորմերի իրավակիրառ պրակտիկայի միասնականություն և հետևողականություն ապահովելու հարցում Վճռաբեկ դատարանի դերակատարումը՝ ի տարբերություն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմքերի, որոնց վերացարկման բարձր աստիճանը դրանց պատշաճ և որոշակի կիրառումը պայմանավորում է բացառապես Վճռաբեկ դատարանի իրավամեկնաբանությամբ: Սահմանադրական դատարանի դիտարկմամբ՝ Վճռաբեկ դատարանի դատական ակտերը բողոքաբերների համար առաջացնում են ընդհանուր իրավասության դատական համակարգում վերջնական լուծում ձևավորող հետևանքներ, հետևապես՝ իրավական որոշակիության և կանխատեսելիության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումների որակական հատկանիշները պետք է համարժեք լինեն Վճռաբեկ դատարանի և վերջինիս կայացրած դատական ակտերի սահմանադրաիրավական և գործնական նշանակությանը (տե՛ս 19.12.2023 թվականի թիվ ՍԴՈ-1707 որոշումը, էջեր 12, 14-15)»*: Մեկ ուրիշ տեղ, Սահմանադրական դատարանը, անդրադառնալով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ Օրենսգրքով սահմանված պայմանների կիրառման խնդրին, նշել է. *«պատճառաբանված դատական ակտի հիմնարար իրավունքի երաշխավորվածության համատեքստում կարևոր է համարել, որ վճռաբեկ բողոքը (…)* ***<u>վարույթ ընդունելու հիմքերից յուրաքանչյուրի մասով ձևավորվի կայուն և կանխատեսելի իրավակիրառ պրակտիկա, ինչը հնարավորություն կտա բողոքաբերին անձամբ կամ համապատասխան խորհրդատվությամբ հստակ ընկալել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից յուրաքանչյուրի նորմատիվ բովանդակությանն առաջադրվող պահանջները և իր բողոքը համապատասխանեցնել այդ պահանջներին</u>*** *(տե՛ս 19.12.2023 թվականի ՍԴՈ-1707 որոշումը, էջ 17)»*: Առավել թարմ աղբյուր հանդիսացող՝ 20.05.2025 թվականի թիվ ՍԴՈ-1783 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է. «***(…) Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ վճռաբեկ բողոք ներկայացրած անձն իրավունք ունի ակնկալելու Վճռաբեկ դատարանի՝ օրենսդրական կանոնների մեկնաբանման արդյունքում առաջադրած բողոքի ընդունելիության կանխատեսելի***

գործնական չափանիշներն ու պահանջները (տե՛ս Սահմանադրական դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի ՍԴՈ-1707 որոշումը)»:

7. Իմ կողմից չի կարող անտեսվել նաև ժամանակ առ ժամանակ իրավակիրառ պրակտիկայի և առհասարակ հանրության կողմից բարձրացվող այն դժգոհությունները, որ բավարար չափով կանխատեսելի չեն վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու կամ դրանք մերժելու համապատասխան օրենքին տրվող մեկնաբանման չափանիշները[5]: Ըստ էության, «Համընկնող հատուկ կարծիք»-ի 6-րդ կետի ծավալուն մեջբերումները ցույց են տալիս, որ այս խնդիրն իրավական օրակարգում հայտնվել է 2005 թվականից հետո և մինչ օրս դուրս չի եկել այդ օրակարգից:

8. Այս գործով Վճռաբեկ դատարանը, որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայման, նշել է. «*Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ Օրենքի 88-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար,* ***որի առկայությունը հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով***»:

9. Այնուհետև, Վճռաբեկ դատարանն առաջադրել է հետևյալ իրավական հարցադրումը. «*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև Ընկերություն) տնօրենի լիազորություններին՝ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվություն կրելու համատեքստում՝ վերահաստատելով վնասի հատուցման վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները*[6]»:

10. Վկայակոչվածի լույսի ներքո կարծում եմ, որ Վճռաբեկ դատարանի կողմից օգտագործված՝ «***<u>որի առկայությունը հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով</u>***» փաստարկը լավագույնս չի նպաստում իրավական որոշակիության սկզբունքի զարգացմանն այնպես, ինչպես դրա մասին խոսել է ՀՀ Սահմանադրական դատարանը: Այլ կերպ ասած՝ այս հասկացությունը տեղ է թողնում անսահման հայեցողության, որն իմ կարծիքով, Վճռաբեկ դատարանը չունի: Իմ գնահատմամբ անձինք պետք է հստակ հասկանան, թե ինչո՞ւ այս բողոքն ընդունվեց վարույթ և, թե ինչո՞ւ այն բողոքը չընդունվեց վարույթ: Այս հասկացությունը թույլ է տալիս Վճռաբեկ դատարանին վարույթ ընդունել օրենքին չհամապատասխանող բողոքը, այնուհետև, օգտագործելով վկայակոչված հասկացությունը, թողնել ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ:

11. Ես ընդունում եմ, որ Վճռաբեկ դատարանը կարող է բողոքի վարույթ ընդունման փուլում տեսնել *առերևույթ* խնդիր, որը սակայն հետագայում, գործի քննության ընթացքում հերքվի: **<u>Սակայն անհրաժեշտ է, որ Վճռաբեկ դատարանը դրա մասին մանրամասն խոսի՝ ի նպաստ իրավական որոշակիության, ինչը թույլ կտա անձանց հասկանալու Վճռաբեկ դատարանի այն շարժառիթները, որոնք հիմք են հանդիսացել կոնկրետ բողոքը վարույթ ընդունելիս: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանը հստակ պետք է ցույց տա իր դատողությունների շղթան և տեսանելի ու տրամաբանական կերպով բացատրի, թե ինչու է բողոքն ընդունվում վարույթ, նույնիսկ եթե հետագայում այն մերժվում է</u>**:

12.Հաջորդիվ, իմ անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական մասի հետ կայանում է դրանում առաջ քաշված հարցադրմանը (տե՛ս վերը՝ 9.-րդ կետը): Այս տեսակետից Վճռաբեկ դատարանը, առաջ քաշելով *Բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորություններին՝ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվություն կրելու հարց,* կրկնել է այն, ինչը ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել էր իր նախկին որոշումներում և դրանց չի ավելացրել ոչինչ, որը ցույց կտար իրավունքի զարգացումը: Ավելին, Վճռաբեկ դատարանը խոսելով

[5] https://www.youtube.com/watch?v=t0MhT129i1Y&ab_channel=YerkirMedia-News: Վերջին մուտքը՝ 22.05.2025թ.: https://www.azatutyun.am/a/24611969.html: Վերջին մուտքը՝ 13.01.2026թ.:

[6] Տե՛ս Որոշման 5.1.-րդ կետը, էջ՝ 8:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի մասին, որը քննարկման առարկա է եղել նաև ստորադաս դատական ատյաններում և Բողոքաբերի հիմնական փաստարկումներից մեկն է եղել[7], սահուն անցել է նույն օրենքի 90-րդ հոդվածին, որն առհասարակ քննարկման առարկա չի եղել ստորադաս դատական ատյաններում և չի հանդիսացել Բողոքաբերի պաշտպանության միջոցը:

13.Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ ամենայն մանրամասնությամբ անդրադարձել էր Բողոքաբերի փաստարկներին: Ավելին, հրավիրել էր դատական նիստ, բազմաթիվ հարցեր էր ուղղել Բողոքաբերին, այդ թվում՝ Ընկերության տնօրենի գործառույթների վերաբերյալ[8], մասնավորապես, թե ո՞ր իրավական ակտով է նախատեսված, որ ընկերության տնօրենը պարտավոր է ստուգումներ իրականացնել կոնտրագենտ ընկերության կանոնադրական կապիտալի վերաբերյալ՝ մինչև պայմանագիր կնքելը, խոշոր գործարքի կարգավորումների և այլնի վերաբերյալ, ինչից ակնհայտորեն պարզ էր, որ Բողոքաբերը չի ապացուցել իր վրա դրված՝ ***<u>Պատասխանողի ոչ օրինաչափ գործողության/անգործության</u>*** պարտականությունը: Վճռաբեկ դատարանն իր Որոշման 5.11.-րդ կետի չորրորդ պարբերությունում նշել է. *«(…) Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման հիմնավորումները,* ***համաձայն չլինելով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանության հետ, որ ընկերության տնօրենի վրա օրենքով կամ այլ իրավական ակտով ուղղակիորեն դրված չի եղել մինչև պայմանագրի կնքումը պատշաճ ստուգումներ իրականացնելու, ընկերության գործունեության պատմությունն ուսումնասիրելու պարտականություն***…» այդուհանդերձ թողել է ստորադաս դատական ակտերը ուժի մեջ: Իհարկե ես հեռու եմ այն դիրքորոշումից, որ Ընկերության տնօրենը մինչև պայմանագիր կնքելն ունի օրենսդրորեն անմիջական պարտականություն ստուգելու կոնտրագենտ ընկերության **<u>կանոնադրական կապիտալը, ֆինանսական շարժերը և այլն</u>**: Բայց այս գործում քննարկման առարկան ոչ թե Ընկերության տնօրենի և Ընկերության միջև առկա իրավահարաբերություններն էին, այլ Ընկերության տնօրենի **<u>ոչ օրինաչափ գործողությունը</u>**՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի լույսի ներքո: Ստորադաս դատարաններում չի հաստատվել Պատասխանողի ոչ օրինաչափ վարքագիծը, որի հիմքով մերժվել է հայցը: Վճռաբեկ դատարանը չհամաձայնվելով ստորադաս դատարանների հետ՝ ոչ օրինաչափ վարքագծի մասով, այդուհանդերձ հրաժարվել է բեկանել դատական ակտը: Իմ կարծիքով այստեղ առաջացել է որոշակի ներքին հակասություն այն իմաստով, որ ստորադաս դատական ատյաններում ողջ վեճը եղել է Պատասխանողի ոչ օրինաչափ գործողության վերաբերյալ և քանի որ այն չի հաստատվել դատարանները վնասի առաջացման մյուս տարրերին չեն անդրադարձել: Իր հերթին Վճռաբեկ դատարանը չհամաձայնվելով, որ առկա չի եղել Պատասխանողի ոչ օրինաչափ գործողությունը, չի բեկանել դատական ակտը և հնարավորություն չի տվել ստորադաս դատարաններին գործի նոր քննության ժամանակ ստուգելու վնաս պատճառելու մյուս տարրերը:

14.**<u>Միաժամանակ, ես համաձայն եմ Վերաքննիչ դատարանի ողջ պատճառաբանությունների և եզրահանգումների հետ և կարծում եմ, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն ամենայն ուշադրությամբ ուսումնասիրել է գործը և կայացրել է ըստ էության ճիշտ որոշում:</u>**

15.Վերոնշյալ իրավական դիրքորոշման համատեքստում, իմ իրավական գնահատմամբ, Վճռաբեկ դատարանն իր Որոշման պատճառաբանական մասում առավելագույնս չի պատճառաբանել, թե ինչո՞ւ է վարույթ ընդունել վճռաբեկ բողոքը: Բացի այդ վերը՝ 13-րդ կետում արտահայտվածի լույսի ներքո, գտնում եմ նաև, որ Վճռաբեկ դատարանի որոշումն ունի որոշակի ներքին հակասություն: Այս տեսակետից գտնում եմ, որ հետագա գործերում մենք կարող ենք անդրադառնալ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու օրենսդրական չափանիշների պրակտիկային՝ միօրինակ և առավելագույնս կանխատեսելի միասնական պրակտիկա ապահովելու համար:

---

7 Բողոքաբերը Պատասխանողի ոչ իրավաչափ գործողությունը փորձել է հիմնավորել այդ հոդվածի ենթադրյալ խախտման փաստով այն համատեքստում, որ Պատասխանողն առանց պատշաճ ստուգումներ իրականացնելու անհայտ ընկերություն «Էլիտեռ Էնթերպրայզիս» ՍՊԸ-ի հետ պայմանագիր է կնքել:

8 Տե՛ս (լսի՛ր) Վերաքննիչ դատարանի նիստի արձանագրության 12:05:03 հատվածը:

16. Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, հիմք ընդունելով վերը նշված հիմնավորումները, ես թեև համաձայն եմ Որոշման եզրափակիչ մասի՝ վճռաբեկ բողոքը մերժելու հետ, սակայն համաձայն չեմ դրա պատճառաբանական մասի հետ, քանի որ Որոշման՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները բավարար չափով չեն պատասխանում այն հարցին, թե ինչու է վճռաբեկ բողոքն առհասարակ ընդունվել վարույթ և Վճռաբեկ դատարանի որոշումը չի պատասխանում նաև այն հարցին, որ եթե համաձայն չեն Վերաքննիչ դատարանի այն վերլուծության հետ, ըստ որի չի եղել Պատասխանողի ոչ օրինաչափ գործողություն, ապա ինչո՞ւ չի բեկանվել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործը չի ուղարկվել նոր քննության, քանի որ այս վեճի գլխավոր հարցը հենց ոչ ***օրինաչափ գործողության*** շուրջ է եղել:

Վճռաբեկ դատարանի դատավոր՝
Գևորգ Գյոզալյան